ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ նախագծային կազմակերպության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախատեսվող գործունեության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/ :

Վեդի համայնք Լուսաշող բնակավայր: 14.06.2024 թ.

2024 թվականի հունիսի 13-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Լուսաշող, Կենտրոնականի 66/ տեղի ունեցավ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ /այսուհետ նաև՝ Կազմակերպություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախատեսվող գործունեության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետի տեղակալ՝ Բ. Շահինյանը, համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Լուսաշող բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Ալեքսանյանը և գյուղի բնակիչներ, Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչներ, <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի տնօրեն՝ Գ. Բաղդասարյանը և Կազմակերպության այլ ներկայացուցիչներ:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախատեսվող գործունեության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը :

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը,իր խոսքում նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին հանրային քննարկումն է /1-ին լսում/, վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցի՝ Ռուբեն Վարդանյանը, վերջինս մասնակի ներկայացրեց հիմնադրամի կողմից կատարվող աշխատանքները, նաև նշելով , որ Կազմակերպությունը բացառապես գործելու է բնապահպանական նորմերով և կանոններով:

Այնուհետ խոսքով հանդես եկավ <<Նորաշեն>>ՆՏ ԱԿ-ի տնօրեն՝ Գ. Բաղդասարյանը, վերջինս իր խոսքում ներկայացրեց կառուցվող կրթահամալիրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝

1. Կրթահամալիրը նախատեսված է 144 աշակերտի համար:

2. Կրթահամալիրը ունենալու է նախակրթարան 40-ն երեխայի համար:

3. Կրթահամալիրը ունենալու է ապաստարան , ընդհանուր մակերեսը՝ 440 մ/ք., իսկ սրահը 194 մ/ք.:

4. Կրթահամալիրը ունենալու է կոյուղի:

5. Կրթահամալիրը զբաղեցնելու է 1.22 հա. Մակերես:

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի փորձագետ Հ.Տերտերյանը հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին՝

1. Որքան է կազմում կառուցվելիք կրթահամալիրի համար նախատեսնվող գումարը:

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն՝ Գ.Բաղդասարյանը, Կառուցվելիք կրթահամալիրի համար նախատեսնվելիք գումարը կազմում է մոտ 1 մլրդ. ՀՀ դրամ:

Հաջորդիվ Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ռ.Վարդանյանը, հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին՝ արդյոք կրթահամալիրի համար նախատեսնվող տարածքում կան թեք մակերեսներ:

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն Գ.Բաղդասարյանը՝ այո կան թեք տարածքներ:

Հաջորդիվ Լուսաշողի դպրոցի տնօրեն՝ Աննա Վարդանյանը հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին՝ քանի դասասենյակ է լինելու նոր կրթահամալիրում

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն Գ.Բաղդասարյանը՝ լինելու է 16 - սենյակ , որից 13-ը դասասենյակ , 3- ը մասնագիտացված լսարաններ՝ լաբորատորիաներ:

Հաջորդիվ Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ռ.Վարդանյանը հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին, որքան ժամանակ է տևելու շինարարությունը:

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն Գ.Բաղդասարյանը՝ նոր կրթահամալիրի շինարարությունը տևելու է 648/վեց հարյուր քառասունութ/ օր կամ 2-ու տարի:

Հաջորդիվ Վեդու համայնքապետի տեղակալ՝ Բ. Շահինյանը հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին՝

1.Նոր կառուցվող կրթահամալիրի ներքնահարկը ամբողջությամբ լինելու է ապաստարան:

2.Առկա դպրոցի շենքը ամբողջությամբ քանդվելու է արդյոք թե ոչ, եթե ոչ ապա որոշակի մաս կարելի է օգտագործել որպես դպրոցականների համար ճամբար:

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն Գ.Բաղդասարյանը, բարձրացված հարցը պետք է քննարկվի, սակայն պետք է նշել ,որ ներկայիս դպրոցի շենքը վթարային է և ամբողջ տարածքը կառուցապատվելու է:

Հաջորդիվ ազդակիր բնակավայրի բնակիչ Կարեն Հարությունյանը հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին, արդյոք կլինեն աշխատեղեր և գյուղի բնակիչները կընդգրկվեն աշխատանքներում :

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն Գ.Բաղդասարյանը, ընդգրկելու են աշխատանքներում ազդակիր Լուսաշող բնակավայրի և Վեղի համայնքի բնակիչները:

Հաջորդիվ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը հարց ուղղեց Կազմակերպության ներկայացուցչին՝

1.Գործող դպրոցի տարածքը կազմում է 1.22 հա. մակերես հողատարածք , իսկ Ձեզ կառուցապատման համար անհրաժեշտ է 1.6 հա. , որն է նպատակը :

2.Կառուցվելիք կրթահամալիրը նախատեսված է 184 աշակերտի համար , ճիշտ է արդյոք:

3.Կառուցվելիք կրթահամալիրը կունենա կոյուղի , հաշվի առնվելու է բնակավայրի բնակլիմայական պայմանները /բնակավայրը ծովի մակերևույթից 2100 մ բարձր է /:

Հարցին պատասխանեց Կազմակերպության տնօրեն Գ.Բաղդասարյանը, ենթակառուցվածքները տեղաբաշխելու համար անհրաժեշտ կլինի տարածքը ավելացնել 0.38 հա.-ով, այո կրթահամալիրը կունենա նախակրթարան 40 երեխայի համար և դպրոց 144 աշակերտի համար, այո կրթահամալիրը կունենա կոյուղի , որը 1.8 մ խորության վրա կանցկացվի :

Նախագահողը հարց ուղղեց ներկաներին, թե արդյո՞ք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների և ներկաների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի տնօրեն՝ / / Գ. Բաղդասարյան

Digitally signed by BAGHDASARYAN GURGEN
1111470103
Date: 2024.06.18 12:49:00 AMT